«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 710-Ն, 2014 թվականի հուլիսի 3-ի N 712-Ն և 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 1119-Ն որոշումներում լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » ---------- 2024թ. N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի

N 710-Ն, 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 712-Ն ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի

N 1119-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, պետական պահպանության ծառայությունում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների և քրեակատարողական ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանելու մասին» N 710-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված հավելված 1-ում «Ավագ ենթասպա» հաստիքային զինվորական կոչումով պաշտոններին վերաբերող 39-րդ կետից առաջ լրացնել 38.1-ին և 38.2-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«

38.1	9/7	49,698	49,077	48,493	47,947	47,436	43
38.2	9/6	44,728	44,169	43,644	43,152	42,692	39

»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, պետական պահպանության, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» N 712-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված հավելված 2-ում «ավագ ենթասպա» զինվորական կոչումով պաշտոններին վերաբերող 40-րդ կետից առաջ լրացնել 39.1-ին և 39.2-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«

39.1	9/7	53,132
39.2	9/6	52,646

»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, պետական պահպանության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական ծառայության և փրկարար

ծառայության ծառայողներին դրամական օգնություններ տալու կարգը, չափերը և պայմանները սահմանելու մասին» N 1119-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված հավելված 2-ում «ավագ ենթասպա» զինվորական կոչումով պաշտոններին վերաբերող 39-րդ կետից առաջ լրացնել 38.1-ին և 38.2-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«

38.1	9/7	212,190	443,670	694,440	964,500
38.2	9/6	212,190	443,670	694,440	964,500

»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հարջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան